ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 256-Ա

<<29>> նոյեմբերի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.2-7) ԾՈՎԻՆԱՐ ԲԱՐԱՏՈՎԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի, <<Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով <<Ախուրիկի բժշկական ամբուլատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 28-ին տրված՝ սերիա ZZ N 244905 անաշխատունակության թերթիկը **հրամայում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-7) Ծովինար Բարատովի Մկրտչյանին 2024 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 15-ը ներառյալ՝ ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար նշանակել ժամանակավոր անաշխատունակության նպաստ:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ժամանակավոր անաշխատունակության նպաստի հաշվարկումն ու վճարումը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

<<29>> նոյեմբերի 2024 թվական
Գյուղ Ախուրյան